





տուհին ֆրանսիական լրագրիները, պատասխանելով այդ յարձակումներին, աշխատում են արգարացնել ֆրանսիայի վարժուհիները, և իրանց կողմից յանդիմանում են անգլիացիներին, որ լորդ Սոլսբերիին մինչև վերջին ժամանակներս եղել է այն քաղաքականության հերոսը, որը պատուհան-Ստեֆանյոյի դաշնագիրը, վերադարձրեց սուլթանին Հայաստանը ու Մակեդոնիան, և երաշխաւորեց Թիւրքիայի ամբողջութիւնը:

Օգոստոսի 3-ին, Գոսլի քաղաքում, Սոլսբերիի մի ճառ արտասանեց, որի մէջ, ի միջի այլոց, ասաց մտաւորապէս հետեւեալը այն վտանգի մասին, որով Արեւելքը սպառնում է ամբողջ Եւրոպային. «Սոլսբերիին կը լինէր հաստատել որ իբրև թէ, Սոլսբերիի պատճառով սպառնալիքներ կարգաւորվ թիւրքիային, զրանով պարտաւորութիւն է դրել Անգլիայի վրա սկսել պատերազմ: Արդէս զի կատարվի այդ սպառնալիքը, անգլիական կառավարութիւնը ոչ մի կերպով չէ խանգարում պետութիւնների համերաշխ գործողութիւնները: Երբեք կարող էր տարածվել մարմին հիւանդ մասերից առողջ մասերի վրա, բայց ինքը յոյս ունի, որ պետութիւնները ժամանակով կարող կը լինեն վտանգը սնչացնելը»:

ՅՈՅՆ ԿՂԵՐԻ ՀՐԱՊԵՐԸ

Կ. Պոլսի լրագրիներում կարգում ենք. «Յոնայ Պատրիարք Անթիոսի ի նկատի առնելով այն դեպքերին, որը յառաջ կուգան հելլեն հրոսակաց խումբերու արշաւանքին, պէտք տեսած է այդ կողմերու յոյն հասարակութեան խրատ տալ որպէս զի չը չեղին այն հաւատարմութիւններ, զոր կը պարտին առ Վեհ Սուլթանին: Անոնք նախապէս խորհած էր այդ իմաստով չըջաբերական մը հանել, բայց ուրբաթ օրուայ իստին մէջ որոշուեցաւ հետագայի Վեհանիկի, Եսնեաի, Գարաբիթի, Գարապինի, Սեբիթի, Գոգանի և Սիսանի մետրապօլիտներուն հովուական թուղթեր ղրկել իրենց հօտին՝ ազգաբարեւով որ մտիկ չընեն չարամիտ թեւադրութեանց:

«Աւստիկ այդ հետագիւրը.

«Եկեղեցին իմացաւ արարքն այն խռովարարաց, որը դուրսն եկած են: Կը ծանուցանենք Ձեր Սրբաշնորհութեան, ըստ որոշման Սինոդին թէ եպիսկոպոսական թուղթով մը խրատէք բրիտանոններն անդրբարութիւնը պահել և խաղաղութեամբ ապրիլ միւս ժողովրդից հետ և վստահութիւն ունենալ բարեյօթարութեան մեր Օգոստոսական Վեհապետին, որ լրջօրն կաշխատի իր բոլոր հաւատարիմ հպատակաց բարօրութեան համար»:

Իս յունաց այն կղերն է, որ չէ յիշեցնում իր

կատէր ընդհանուր ներում ընելու և հայկական բարենորոգումները գործադրելու իր յօթարութեան (!), կերեի թէ Նուրհանին խորհրդով ժողովուրդը խաբելու համար քանի մը անմեղ հայ բանաստեղծական աղիտի արձակել, հուշակելով կայսերական զիտութիւնը, որ չորս կընէ չը բանտարկել... ո և է յանցանք չունեցող հայերը: Իսկ յանցաւոր կարծուածները,— և սակաւամիւս ալ չեն անոնք,— պիտի մնան բանտը, չիւրենց արժանի պատիւը կրելու, ինչպէս բարեկամներու մէջ յայտնած է Նուրհանը:

Իսկ բարենորոգումները, անոնք ալ կամաց կամաց պիտի գործադրուին: Եւ զիտէր թէ ինչ ստիկալ ըսն է, երբ թուրք կառավարութիւնը բարենորոգում կը գործադրելու կըլլէ: Արդիւնդ ներս ալ, որոնք միշտ կը տեսնուին արդէն, հետզհետէ շարունակուելու վրայ են: Քանի մը օրէ ի վեր ջարդի վախը այն աստիճան սաստկացած է Պոլսոյ ժողովրդին վրայ, որ ամենքն ալ շուրաւ են, շատեր ալ ընտանիքով կը հեռանան Պոլսէն: Գոստ-Գաբուի թաղը կատարելապէս պաշարուաւ իրենցիկ մէջ է. հոն գացող հայը անպատճառ կը ձերբակալուի. իսկ հայաբնակ ուրիշ թաղեր ամենախիստ հակադրութեան ենթարկուած են:

Խզմիլեան պատրիարք ինչ կընէ.— իր Հիսար-Տիպիի բնակարանը քաշուած է խեղճ մարդը. կըսուի թէ հիմակ այնքան տխուր և մտածկոտ չէ, ինչպէս առաջ: Ոչ որ յաջողած է կորդել իրմէն յանկարծական հրաժարումին գաղտնիքը. յուլիս 27-ի նամակովս մանրամասնօրէն պար-

արժանաւոր նախնիքներին, ալ հայկական Բար-թուղիմէոսներին, Ալեքսանդրներին, Գիմաքսեաններին...

Կ Ր Ե Տ Ե

Վերջին տեղեկութիւնները համաձայն, կրե-տական ինքիւրը նոր կերպարանք է ստանում. Գրաւորին և Ռուսաստանը մտադիր են ազդու միջամտութիւն գործել այդ ինքիւր մէջ: Լոնդոնի լրագրիները հաստատում են, որ Կ. Պոլսի ռուսաց դեսպանատան առաջին թարգմանը, յուլիսի 26-ին, զիմել է ուղղակի սուլթանին՝ մի ծանուցագրով, որը Պաղիւսի պալատում մեծ յուզմունք է առաջացրել: Ծանուցագրի բովանդակութիւնը անյայտ է, որովհետեւ նա չէ հաղորդել եւրոպական դեսպաններին և ոչ մէկին, նոյն իսկ ֆրանսիական դեսպանին: Լրագրիները, սակայն, աւելացնում են, որ ծանուցագիրը կապ ունի Ռուսաստանի թիւրքիայի վերաբերմամբ ունեցած արամաղութեան փոխադրութեան հետ:

ՆԱՍՏԱԿ ԱՍԵՐԻԱՍՅՈՅ

Պոստ օն, յուլիսի 20-ին

Հայերի գաղթականութեան առաջին առեւելու նպատակով, այստեղի հայերը հետեւել Տրաքիա ուղղած են ամերիկական հայ գաղթականութեան.

«Սիւրբ Երի հայրենակիցներ».

Վերջերս կարգ մը «հայտեր» ամերիկացիք և Հայաստանի ջարդերին վերջ հրապարակ ներառող «ազդարներ» հայեր՝ մեզ անհասկանալի պատճառներէ զրդեալ՝ հայկական դատի այս ձգնաժամի պահուն, մի անակնկալ և անսովոր ինքիւր սկսած են յուզել Ամերիկայի զանազան կողմերը: Այս պարտնետու կարծիքով, քանի որ թուրքիոյ հայոց վիճակին բարեփոխման ամենափոքր յոյսը չը կայ՝ այլ ևս ուրիշ ճար չը մնար, եթէ ոչ այդ հայերը ամբողջովին գաղթեցնել Ամերիկա:

«Աւելորդ կը համարինք աստ բացատրել, թէ այդ վստասութիւնը, մանաւանդ հայերու համար, մտքի և սրտի ինչ աստիճան տկարութիւն կընթաղէ: Սակայն եթէ Հայաստանի յոյսոյ վերջի նշանը մարած լինի իսկ՝ կարելի և գործնական է այդ ծրագիրը իրագործել: Հարկանցի կերպով ցոյց տանք անյաղթելի դժուարութեանց մի քանին, որք թերեւս վրիպած լինին մեր կարծեցալ բարեկամաց սուր տեսութիւնէն:

1. Առնուազն միլիոն մը հայեր Ամերիկա փոխադրելու տարապայման ծախսի կարօտ է: Միայն ճանապարհածախսի համար գէթ 10 միլիոն տօլար պէտք է. նոյնչափ գումար մ'ալ հարկաւոր է գաղթելոյ առաջին, զոնէ վեց ամսուան, ապրուստին համար: Ո՞վ պիտի հայկայ-

ղած էի Պատրիարքին և Վարչութեան զօրաւորին կացութիւնը, որ տարակոյտ չը կայ թէ, գլխաւոր պատճառն էր հրաժարումին. սակայն կերեի թէ ուրիշ բաներ ալ պատճառ են, ար-ժանահաւատ աղբիւր՝ ստացած տեղեկութիւնս սա է, որ թուրք կառավարութիւնը, բացի Պատրիարքը և Վարչութիւնը թաղարդի մէջ ձգելէն ձեզի արդէն ծանօթ եղանակներով, սպառնացել է ջարդերը սկսել՝ եթէ Պատրիարքը չը փոխանցէ իր հրաժարականը: Գիտէք արդէն, որ պետական հարուածը անկարելի պիտի ըլլար, եթէ Պատրիարքը տակաւին տեղի չի տար: Հակառակ Նուրհանի տարածած լուրերուն թէ կառավարութիւնը 3000 դրուշ ամսական յատկացուցած է խզմիլեանին և թոյլտուութիւն ըրած է իսկիւտար բնակելու, այս չարթու Մեծ-Կղզի և Վոսփոր երկեցան հայերէն և թուրքերէն տպեալ յայտարարութիւններ, որոնք կը պահանջեն, որ թուրք կառավարութիւնը դատաստանի առջև հանէ խզմիլեան պատրիարքը, իր յեղափոխական և մասնակից կատարելած սպանութիւններուն: Այս յայտարարութիւնները ազգապաշտօններու գործն է, հայերէն աւելի թուրքերը գրգռելու համար:

«Հայերենիք» լրագրին տնօրէն ու. Դանադար տակաւին բանտը կը մնայ, հակառակ իր բացարձակ անմեղութեան: Կըսուի թէ ոստիկանութիւնը պ. Դանադարին վերաբերեալ թղթերը ղրկել է Ատլին, ամբաստանիչ ատենան, և հարցաքննութիւնը յանձնուել է հարցաքննիչ-դա-

թէ այդ ծախսը: Պր. Հիրշ, հրէայ միլիոնատէրը, 15 միլիոն տօլարով չը կրցաւ իւր ազգակիցներէն յաջող գաղթականութիւն մը հաստատել: Որոնք են հայ ազգի անձանօթ բարերարները, որ դեռ նոր հրապարակ պիտի գան իրենց միլիոններով:

2. Յայտնի է թէ թուրք կառավարութիւնը բնաւ չի պիտի հաւանի իր աշխատասէր, արտադրող և հարկավճար հպատակներէն ղրկուիլ: Եւրոպական միջամտութեան յուսալ՝ արդէն իմարութիւն է: Մոռցուած չէ, թէ ահագին նաւատորմով մը Տարտանիլի բերանը սպասած պահուն՝ հաղարներու արեւը հեղեղի պէս կը հոսէր ամեն օր: Սակայն եթէ նոյն իսկ սուլթանը հաճի, օժիքը հայոց ձեռքէն ազատելու համար, ազատ ճամբայ տալ, ո՞վ պիտի դասէ թիւրք, քիւրդ, չէրէզ, լազ և այլ բարբարոս խուժաններ՝ անպատշաճ գաղթականաց վրա յարձակելէ: Գաղթման առաջին շարժումը նշան մը պիտի լինի նոր ջարդերու և նոր կողոպտանքներու: Հայերը իրենց անշարժ ստացուածքէն (չարժական արդէն չէ մնացեալ) և ոչ մի փարայի բան ծախել պիտի յաջողին, և նոյն իսկ իրենց թուրք կէսը զոհ տալէն վերջ, հազիւ պիտի կրնան ծովեղբրը հասնիլ: Եւ յետոյ...

3. Հայ ժողովուրդը պիտի ուզէ յաւիտենապէս թողնուլ իւր չորս հազար տարուան հայրենիքը, միլիոնաւոր ինչ ու նոր քաղերու և նախադասաց արեւմտ սրբազորութեան նուիրական հողը: Ամերիկայի հայոց ստուար մեծամասնութիւնը հակառակ է այս գաղափարին: Հոս հաստատուած մի քանի բարեկեցիկ հայեր գաղթականութեան մեծամասնութիւնը չեն ներկայացուցներ, ինչպէս որ իրենց մի քանի վախկոտ թղթակից բարեկամներն Հայաստանի և Կիլիկիոյ հայութեան ձգտումն ու փախաւքները չեն արտայայտել: Պարզ է ուրեմն, թէ այս ծրագիրը ոչ միայն անգործնական, այլ և վտանգաւոր է: Որովհետեւ...

1. Սա պարզ դաւաճանութիւն մը կը լինի հայ ազգի ամենատուրը իրաւանց դէմ՝ վատաբար թշնամոյն յանձնելով 1879-էն ի վեր այնքան թանկագին զոհաբերութեամբ ձեռք բերուած մեր բոլոր միջազգային և բարոյական իրաւունքները:

2. Օտար մարդասէրներու միտքը չիփոխելով՝ «կարմիր խաչ» և ուրիշ նպատաւամտոյց ընկերութեանց արդէն նուազ հասցիլը զգալապէս պիտի պակսեցնէ, որով մի քանի անձանց սխալ հայեւներու հորհրդէ՝ հազարաւոր ընտանիքներ սովամահ պիտի կորնչին:

3. Հայ ժողովուրդը, որ այժմ սկսած է տակաւ իր նախկին ոգեւորութեան վերադառնալ, զարձեալ պիտի կորսնցունէ իւր բարոյական կորովը, որ միակ գրաւականն է ապագայ յաջողութեան: Յայնժամ նա՛ մոռցած իր ապագան, տաւոր Ֆէյզի պէլի, որ պալատի լրտես ալ է: Պ. Դանադարի կարծեցալ յանցապարտութիւնը հաստատող ո և է ապացոյց չի կայ, բացի Նանսիի նախալէն, որուն ինչ աստիճան անկարծող եղած ըլլալը բացատրած էինք արդէն: Սակայն կը լսենք թէ կառավարութիւնը գաղտնի հրահանք տուած է դատարանին, անպատճառ դատաւարութիւն պ. Դանադարը, և այս նպատակին հասնելու համար զրգարտութիւններ ալ ընել, որովհետեւ Նանսիի նամակը բաւական չէ պ. Դանադարը դատաւարութեան:

Մոռցած էի ինչիւր սա պարագան թէ «Հայրենիք»-ի ջնջումը տեղի ունեցաւ տնօրէնին բանտարկութեան հինգ օր ետքը, յուլիս 16-ին: Ահաւասիկ ջնջման հրամանագրին թարգմանութիւնը, որ հրատարակուեցաւ «Արեւելի» և միւս թերթերուն մէջ: «Հայրենիք» լրագրոյ տնօրէնին ինչ-ինչ յոյս ընթացքներուն համար, որոնք ստուգուած են, այդ թերթը բոլորովին ջնջուած է: Արդ, պէտք է ըսնմ, որ յուլիս 16-ին պ. Դանադարի թղթերը և ոչ իսկ դատարանի զրկված էին և չորս ընթացքը, եթէ երբեք կար չէր կրնար ստուգուած ըլլալ ոստիկանական հարցաքննութեամբ, ինչպէս որ մինչև հիմակ ալ ստուգուած չէ դատարանին մէջ: Յանցապարտութիւն մը օրինաւոր դատարանով կորչուի. թուրք կառավարութիւնը այնքան վստացած է, որ անմեղ մարդու մը լրագիրը կը ջնջէ, նոյն իսկ ստանց դատարանական վճիռն սպասելու: Եթէ պ. Դանադար անպարտ արձակուի, ինչպէս կը յուսան հայ թէ օտարազգի իր բազմա-

կորուած իր դատողութիւնը՝ անդեկ նաւու նըման՝ ամեն ալիքի և հովի խաղալիք դարձած նորանոր աղետներու պիտի հանդիպի, մինչև անմահութիւնը: Բարեւոյն աղետներու փոխարէն թերեւս մի քանի հազար ընտանիքներ յաջողին Ամերիկա հասնիլ՝ օտար հողատէրներու և անոնց գործակալ հայերու քրտակը պարարտացնել ծառայելու համար:

Հայ հասարակութեան կը մնայ ուրեմն իր արհամարհանքով դատաւարութիւնը բոլոր այս կարգի անիմաստ ու վնասակար ծրագիրները: Այսօր թիւրքիան տնտեսական և քաղաքական քայքայման վիճակի մէջ է. մեծ և փոքր ազգեր ժառանգորդի ազա՛ն աչքերով կը դիտեն հիւանդ մարդու օրհասական տանջանքը. միթէ մենք հայերս ենք, որ այսչափ սոսկալի հալածանքէ և ջարդերէ վերջ իսկական և մնայուն իրաւունք մը ձեռք բերելու պահուն՝ ամօթալի նահանջով մը պիտի փակենք մեր ազգի պատմութեան վերջին էջը:

Մեր բազմաշարժար ժողովրդի տանջանքը, բերաւոր նախադասաց արեւը, մեր կրնան և մանկանց աղիողորմ ձիւք՝ երկնոտ վստասութեան փոխան՝ վրէժխնդրութեան, յուսահատ արեւութեան և անձուիրութեան ողի պէտք է ներշնչեն ամեն աղին հայու սրտին: Հայեր, ցոյց տանք մեր գործերով, թէ մեծ մարտիրոս ազգի մը արժանի դաւաններն ենք»:

Այդ հրաւերը տալագրութեամբ և տարածված է գաղթական հայերի մէջ:

Արմէն

ՆԱՍՏԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Սալմաստ, յուլիսի 21-ին

Վանից լուր ստացվեց, որ վերջին օրերս վանի առաջնորդական փոխանորդ Սահակ վարդապետին, օրինող Գերոյեանին և իր մօրը, մի ձիւտը խնդով, Կ. Պոլսի ուղարկեցին:

Մօտ երեք ամիս է, որ պարսից կառավարութիւնը 3000-ի չափ սարկալ է հաւաքել Սալմաստում, որոնք նստում են Գերեյի Զիմե-նում: Թէ ինչ պատճառներով են զրանք հաւաքվել Սալմաստում, մեզ անյայտ է: Ասում են իբր թէ սահմանները տէք է պաշտպանեն: Անկիթթ սարկալները, ինչպէս իրանց վաղուցվայ սովորութիւնն է, մինչև երեկոյ թափված են դիւղերում, և ինչ վարկերութիւններ տալը, անում են: Մանում են այգիները, գոլանում, փաշտում են պտուղները, ծառերը: Ամեն երեկոյ, արևամտին, եթէ մէկը բանակաւորի մօտերը լինի, կը տեսնէ բեռնաւորութեամբ սարկալներին, որոնք վերադառնում են իրանց արշաւանքից, բերելով իրանց հետ հաւեր, բաղեր, մթերքներ, կտրատած ծառեր, ճանապարհորդներից խլած չորեր և այլն:

Թիւ բարեկամները, արդեօք կառավարութիւնը մինչև վերջը ջնջուած պիտի նկատէ «Հայրենիք»-ը, թէ արտօնութիւնը նորէն պիտի դարձնէ տնտ:

Ինչ որ ալ ըլլայ, պիտի հարցնէք անտարա-կոյս թէ կառավարութիւնը ինչու այսչափ ինչ-կած է այս մարդուն ետէն. պիտի պատասխանեմ, պարզապէս հաղորդելով ձեզ ինչ որ կը խօսուի այս մասին լուստեղեակ չըջանալիս: Բնած էի թէ կառավարութիւնը բանտարկելով պ. Դանադարի պէս ժողովրդական մարդիկը թուրքիոյ մէջ, նպատակ ունէր հայեր նախադասու, վերաւորելու, անաւելելու: Ասկէ դատ, «Հայրենիք»-ի խախտումը և տնօրէնին բանտարկութիւնը կերեի թէ պետական հարուածին յաջողութիւնը ապանովելու նպատակով ձեռք առնուած նախազգուշութիւններուն կարգէն է, որոնք, ինչպէս տեսանք նախորդ նամակներում մէջ, Նուրհանի խորհրդով սկսած էին գործ դրուել երկար ժամանակէ ի վեր: Նուրհանին անձնական հակառակութիւնը այնքան կուրցուցած է զինքը, որ չէ վարանած,— երբ վարանած է այդ անամօթը զրպարտութիւններու մէջ,— երթալ կառավարութեան մօտ զըրպարտութիւններու ամբողջ հրաւանքը մը ներկայացնել պ. Դանադարի և «Հայրենիք»-ի մասին: Նանսիի նամակն ալ այդ խողովակով հասած է կառավարութեան ձեռքը:

Պ—ի

Բերդ Մամէ չի կանխել ցեղապետը, որը Մուշակեանի Զահի ձեռն թափելէն թէ՛ հրան գնաց իր ավիտայով, վերադարձաւ պատուա- նշաններով և սահմանապահ-սահմանադրութեան պաշտօնով:

Յովսէփ վարդապետ Սարգսեան մի ամիս է, որ չընդգայում է Սարգսեան, ինչ և Որմի:

Գ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՐԻՔԵՐ

—Վիեննայի «Neue Freie Presse» լրագիրը յայտնում է, որ մինչև այժմ գոյութիւն ունեցող եւրոպական համաձայնութիւնը խախտվել է Անգլիայի մերժումով մասնակցելու Կրեաի պա- շարման: Անգլիական կառավարութիւնը, ասում է լրագիրը, ծանր պատասխանատուութիւն է առ- նում իր վրա, որովհետև կարող է պատահել, որ մի քանի պետութիւններ, որոնք մասնակց- ցում էին կրեաական հարցին, կը հրաժարվեն միմեան գործելուց: Այն ժամանակ նոր արհես- ճեղութիւնների վտանգ կը ծագի ոչ միայն կըղ- դում, այլ և Թիւրքիայի ուրիշ տեղերում:

—«Daily News» այն կարծիքն է յայտնում, որ կրեաական հարցը մոտենում է իր լուծման: Անգլի- ան և Ռուսաստանը, ասում է լրագիրը, արդէն համաձայնութիւն են կայացրել իրանց մէջ, որով ոչ միայն սկսած է պահպանել եւրոպական խաղա- ղութիւնը վտանգից, այլ և աղաւան կրեաացիներ- ին թիւրքերի կատաղութիւնից:

—«Secolo» իտալական լրագիրն հեռագրում են Կ. Պոլսից. «Բացված է մի դաւադրութիւն, որի նպատակն է զանգեցնել անկը սուլթանին: Դաւադիրները կամենում են եղել Արգուլ Համիդի տեղ սուլթան նստեցնել նրա օրդի իւղ- ղէլին: Բազմաթիւ կաշնաւորութիւններ են եղել և կաշնաւորվածների թիւում կան սպա- ներ, պաշտօնականներ և մինչև անգամ մի բարձ- րաստիճան պաշտօնաւոր:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 7 օգոստոսի: Թաղաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆեօդորովնա հասան Պետերբուրգ, այցելեցին Պետրոպոլսկի տաճարը, երկրպագեցին հանգուցեալ ծնողների նշխարներին, և այցելեցին Կաղանկի տաճարը: Ժամը 4 1/2-ին Նոյա Մեծութիւնները բարեհաճե- ցին վերադառնալ Պետերբուրգ:

ՀՌՈՒՄ, 7 օգոստոսի: Օգոստոսի 6-ին յայտա- բարկւած իտալական զանաժառանգի նշանադրու- թիւնը Չերնոօբորիական Ելենա իշխանուհու հետ ընդհանուր ուրախութիւն առաջ բերեց:

ՀՌՈՒՄ, 7 օգոստոսի: «Tribuna» լրագրի մէջ հրատարակված է նրա աշխատակցի տեսակցու- թիւնը Լէօնարդինի հետ: Վերջինս յայտնել է, որ Մէնէլէր նեգուրը սպասում է Լեոնարդինի իտա- ական զինեւորի գալու, որպէս զի խաղաղու- թեան դաշն կընել: Խաղաղի զինեւորական զե- բիւնների ազատութիւնը կախված է խաղաղու- թեան կնքելուց: Մէնէլէրը ցանկանում է կապել իտալիայի հետ նաև առեւտրական դաշնագիր:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 8 օգոստոսի: Հրատարակված է Բարձրագոյն հրաման բաց թողնել երկու նոր, 166 և 167 սեռական 40/0 բէնտայի մէրիաներ, ամեն մի մէրիան 10.000.000 ռուբլի անուանա- կան արժէքով, փոխարինելու համար 1887 և 1891 թ. ականաների 40/0 ներքին փոխառութեան օրէնքայինները, ինչպէս և թղթադրամով բաց թողած պետական երկաթուղիների 40/0 օրէնքա- ցիւնները:

ԲԵԼԳՐԱԴ, 8 օգոստոսի: Թիւրքաց հիւպատոսը վրանկում, ստըով ման գալու ժամանակ դէպի Պրէշէվայ, որ երկու ժամ հեռաւորութեան վրա է գտնվում, թիւրքաց հողի վրա, սպանվել է ար- նավումների ձեռքով, որոնք նրան ընդունել են Պրէշէվի զայնազամի տեղը:

ՍՕՏԻՍ, 8 օգոստոսի: Լուրերին նայելով, Սոֆիօլի կարինէտի հրաժարականը մերժվել է: Կարինէտի այժմեան անդամները մնում են ի- ընդ պաշտօններում: Պետրովին յաջորդ անուա- նում են զննապետ Պապրիկովին: Մնացած եր- կու մինիստրական պարագայ տեղերը, հաւանա- կանօրէն, կը բռնեն Յանկովիտները: Պապրիկո- վը աւարտել է իր ուսումը Պետերբուրգի զին- ւորական ճեմարանում: Ստամբուլականները աշխատում են խռովութիւն առաջ բերել զօր- քի մէջ, անհիմն լուրեր տարածելով թիւրքաց սահմանում եղած ընդհարումների մասին, որոնց ժամանակ, իբր թէ, սպանվել է մի բոլորական զննապետ, բայց այդ լուրը հերքվում է: Մի և նոյն նպատակով «Свобода» լրագիրը հաստատում է, իբր թէ Պետրովի անկումը եղել է Ռուսաս- անի պահանջով, ինչ որ անհիմն է, ինչպէս յայտնի է այստեղ, Պետրովի հրաժարականը ա- ուաջ է եկել նրա և իշխանի պալատի մէջ ծա- դած անհաւանական տարաձայնութիւններից, այն պատճառով, որ Պետրովը մերժել է ներկայ լի- նել բանակում, երբ իշխանուհին այցելում էր բանակը:

ԽՄԲԱԳՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՆՈՒՄ Է

ԷՆՁՆԵԼԻ Հայոց զորացի վարչութեան Բա- զուխի Մ. Մաղաթեանց նուիրեց «Մշակի» մի օրինակը ձեռն գրեցին:

ԷՋՄԻԱՇԻՆ, Գ. Կարապետեան: Ձեր ուղար- կած հասցեով կանոնաւոր «Մշակ» ուղարկվում է այսօրից սկսած: Բայց եթէ բաժանորդը չէ ստանում, դրանում մեղաւոր է միայն թիւրքաց պոստը: Ձեր նամակը ստանալով՝ օգոստոսի 1-ից զաւարեցրինք ուղարկելը: Գուրա գալով հորս ամսվայ վճարը 4 ռուբլի, խմբագրութեան մօտ կը մնայ 2 ռուբլի: Բարեհաճեցէ՛ք յանձնել մէ- կին, որ մանի խմբագրատուն և յետ ստանայ այդ 2 ռուբլին: Այդ փողը պոստով ուղարկելը մենք յանձն առնել չենք կարող:

ՄԻՈՒՅԼՈՎԱԿ, Ի. Կ. Պետրոսեանց: Մենք հնարաւորութիւն չունենք ձեր աւելորդ ուղար- կած փողը պոստով վերադարձնելու. յանձնեցէ՛ք մէկին անձամբ ստանալ խմբագրատանից:

Խմբագիր՝ ԱԼԵԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆՔԱՐ  
Հրատարակիչ՝ ԱՆԿԻՐԱՍ ԱՐՄԻՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՊՐՈՑ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

Բ Ե Ր Թ Ո Ւ Գ Ե Ր Ե Ն Ի

Ընդունում է ԱՇԱԿԵՏՆԵՐ՝ գիշերօթիկ, կիսա- գիշերօթիկ և երթևեկներ:

(№ 92)

1—3

ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՄԻ ՀԱՅ ՌԵՍՈՒՅԻՏ

որը ունի ցէնը և տաս տարի ուսուցչի և աւագ ուսուցչի պաշտօն է վարել Գարաբաղի ինժե- րական դպրանոցում և հայոց ծխական դպրոցնե- րում, պաշտօն է որոնում յիշեալ դպրոցներում:

Հասցէն կարելի է հարցնել «Մշակի» խմբա- գրատանը, 1—2 ժամը: (№ 92) 1—3

ՖՕՆՕԳՐԱՖՆԵՐ ԷԴԻՍՈՆԻ

Միակ պահեւած ամբողջ Ռուսաստանի համար

ԻՍԿԱԿԱՆ ԱՊՊԱՐԱՏՆԵՐ

Նրա բոլոր նոր գիւտերի

Բ Ի Թ Ա Ր Դ Ե Ա Կ Օ Ր Ի

Էլէկտրո տեխնիքական պահեստում

Москва, Газетный пер., уголъ Б. Никитской ул. д. Нейштадтъ.

Պրէշիւտրանոյ ձրի:

(№ 91)

(2)

1—2

Մ Ի Հ Ա Յ Ո Ւ Հ Ի

կամենում է դասեր տալ 7—12 տարեկան աղ- չիկ—երեխաներին, ՌՈՒՍԵՐԼԵՆ ԵՒ ՖՐԱՆՍԵՐԼԵՆ լեզուներին և ՄՈՒՋԵՆԿԱՅԻՑ: Յանկովիտ է գըլ- խաւորապէս ուրիշ քաղաքներում: Հասցէն.

Старо-Арсенальная улица, № 9.

(№ 89)

2—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

երկուշաբթի, օգոստոսի 12-ին, երկուցեան 9 1/2 ժամին, նշանակված է Ժողովարանի ան- դամներ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ, քուէարկելու կանգնող առն և ր, փոխարէն յուլիս 28-ին չը կայացած Ժողովի: (№ 90) (ե. չ.) 2—2

Լոյս տեսաւ

«Հանրամատչելի Թշկարանի» Ա. հատորի Գ. և վերջին գրքը

ՎԵՆԵՐԱԿԱՆ ԱՌՏԵՐ

Բովանդակութիւն. 1) սիֆիլիս, 2) շանկր, 3) երբ կարող են ամուսնանալ սիֆիլիսոսները, 4) միջապարկի բորբոքում, 5) միզամանջի անձկու- թիւնը, 6) կանանց սեռական մասերի սուսու- նակից առաջացած հիւանդութիւնները:

ՍԵՆԱԿԱՆ ԱՆԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Գլխն է Գ. ան ձախուռ ու Թիֆլիսում 90 Կ. ճանապարհաձայնով ամեն տեղ մի ռուբլի.

Գրմել՝ Вѣ г. Елисаветполь. Помощнику Ели- саветпольскаго губернскаго врача, доктору медицины Теръ-Григуриуцу, Թիֆլիս, Կենտրո- նական գրաւաճառանոց: (№ 77) 4—6

ԿԵՕԼԵՐԵԱՆ ՓՈԹԻ ՄԻՋԱՏՆԵՐԻ ԴԵՍ

Ճախվում է ԱՄԵՆ ՏԵՂ, ԲՈՂՈՐ նշանաւոր առեւտրականների մօտ:

Մօտ 15 տարի առաջ այդպէս անուանված «Պարսկական», իսկապէս «կով- կասեան» երիցուկը (աղացված Կովկասեան լեռների վրա վայրենի կերպով բուսնող երիցուկի երկու ծաղիկներից) համարվում էր և յիւրաքի էր ամենանշանաւոր և իս- կական միջոց ամեն տեսակ միջատների դէմ:

Այդ պատճառով այդ փողին արտահանելը բոլոր երկրները բաւական նշանաւոր արդիւնք էր, մինչև որ տեղացիները իրանց համարձակ խառնուրդներով և Փայտի- Ֆիկացիով չը փչացրին այն աստիճան, որ նա բոլորովին կորցրեց իր նախկին նշա- նակութիւնը և մինչև անգամ մենք, առանցս, ուրախ էինք, որ հնար ունեցանք փոխարինել նրան այն ժամանակ անակնկալ կերպով ծախու երեցած «Դալմատա- կան երիցուկով, թէպէտ վերջինը իր աղիցիւթեան գորութեամբ միջատների վրա՝ տեղի է տալիս անխառն «Կովկասեան երիցուկին»:

Այդպիսով փոխանակ պետութեան համար շահաւէտ արտահանման արդիւն- քի, Դալմատական երիցուկը ներմուծութեան նշանաւոր առաւելագոյն դարձաւ ար- տաստահանից, իսկ Կովկասեան երիցուկը համարեա թէ մուռացան:

Կամենալով վերականգնել կորած վստահութիւնը դէպի մեր գերազանց հայ- րենի արդիւնքը, մենք 1892 թ.ին հիմնեցինք Կովկասում, Ալեքսանդրօպօլ քաղա- քում, մշտական գործակալութիւն, թէ հսկելու համար Անդրկովկասում գեներալ- չափի մշակութիւնը զարգացնելու մեր գործի վրա, և թէ յատկապէս տեղական գիւղացիների ձեռքով երիցուկի ծաղիկների ամենալու տեսակները ընտրելու հա- մար, որ հաւաքվում է հէնց ծաղիկեւ սկզբին, և մանաւանդ

Ա Ր Ա Գ Ա Տ

լեռան ստորոտի մօտ: Չորացած ծաղիկները ազատվում են մեր սեփական գործա- րանում, Մօսկվայում, և այդ բոլորից պարզ երեւում է, որ ամենից լաւ կը լինէր պահանջել Բ. Կէօլեր և Ընկերութեան նշանը և զորոյն, որպէս երաշխաւորութիւն ապրանքի վերադիշալ արժանաւորութիւնների:

Գործարանա-Առեւտրական Ընկերութիւն «Բ. Կէօլեր և Ընկ., Մօսկվայում»:

(№ 77)

(3)

2—3

ԿԵՕԼԵՐԵԱՆ ՔԱՅԱՒԱՅԻՆ ԷՍԵՆՑԻԱ

Մօսկվում է ԱՄԵՆ ՏԵՂ, ԲՈՂՈՐ նշանաւոր առեւտրականների մօտ:

Զնորհիւ.

ԿԵՕԼԵՐԵԱՆ ԲԱՅԱԽԱՅԻՆ ԷՍԵՆՑԻԱՅԻ

յայտնի լաւ յատկութեանը և նրա անկասկածելի տաւելութեանը բոլոր ուրիշներից, նրա սպառումը, աստիճանաբար աճելով, հասաւ անցեալ տարի

500,000 ՓԱԿՈՆՆԵՐԻ

և այդ հնարաւորութիւն առեւց ընկերութեանը պակասեցնել նրա գինը:

Սակայն էժան գինը առաջարկում են և նմանողներից չտոնրը, բայց անհրաժեշտ է գի- տենալ, որ նրանք իրանց հիւնը ունեն ոչ թէ աճողին սպառումը և բնականաբար այդ դէպ- քում ապրանքի հնարաւոր էժանացումը, այլ միայն ստիպված լինելով մրցել լաւագույն և ն ջուր և էսէնցիայի համը այնքան նուրբ չէ լինում:

(4)

(№ 77)

2—3

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՐՕՄՄԻԱ“

Բարձրագոյն հաստատված 1881 թ.ին

Ս. Պետերբուրգում, Большая Морская, № 37.

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳՂՈՒԹ 25.500,000 ՐՈՒԲԼԻ

Ընկերութիւնը ընդունում է:

ԿԵՆՏՐՈՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Այսինքն զբաղաւորել և եկամուտի ապահովութիւն ընտանիքի համար, կամ ձերութեան ժամանակ, օժիտ աղջկեանց համար, ստիպելու համար երեխաների հա- մար և այլն. առանձին շահաւէտ պայմաններով. ապահովագրողները մասնակցում են ընկ. օգուրին:

Առ 1-ին յունվարի 1896 թ. «ՐՕՄՄԱ» ընկերութիւնը ապահովագրած ունի 35.663 անձ,—91.406.948 ռուբլի գումարի:

ԴԺՔԱՄՏ ԴԵՊՔԵՐԻՅ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Ինչպէս առանձին անհատների նոյնպէս և հաւ. վնաս անձանց, այն է—գործա- րաներում ծառայողների, ընտանիքների և այլն՝ նուազեցրած վճարներով՝ չնոր- հիւ գիւղիկներ, որը վճարներից զուրս է հաշվում:

ՀՐԴԵՀԻՅ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ամեն տեսակ չարժան և անչարժ կաքերի (չինութիւնների, մեքենաների, աղ- րանքի, կահ-կարասիների և այլն):

ԱՊՐԱՆԵՐԻ ՓՈՒԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

զետային, ցամաքային և ծովային. նուրբի ապահովագրութիւն.

Ապահովագրութիւն ընդունվում է Ս. Պետերբուրգում (Большая Морская, соб. д. № 37.) Թիֆլիսում Սերգիւլիսկի փողոց, № 6. 1-ն զանազան քաղաքների գոր- ձակալութիւններում:

Նոյնպէս կարելի է ստանալ ապահովագրական տոմսակներ դժբաղդ դէպքերից, երկաթուղիով կամ չողեւաւով ճանապարհորդած ժամանակ, երկաթուղային կա- յարաններում և ծովամատուցներում:

(№ 89)

(2) 29—52

Ն Ե Ր Կ Ա Յ Թ Ի Ի Ս Ե Պ Տ Ե Մ Բ Ե Ր Ի 1-ԻՅ

Կովկասեան ուսումնարանական չրման հողաբարձու թղթաւորութեամբ

Թիֆլիսում րադվում է

ՄԱՍՆԱԻՈՐ ԻԳԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Ա. ՍԵՐԵՐՈՂՆԵՐ

Դպրոցը կը գետեղվի նոյն շինութեան մէջ, որտեղ գետեղված է Գ. Բարխուդարեանի ա- րական դպրոցը:

(№ 90)

2—3